

## ԾԻՐԱՆԱԿՈՐ ԶԵՌՆՈՔԻ ՃԱՌԸԸ

— + — առջև — + —

**ՄԱՐԴԱՌԻԹԵԱՆ մէջ չի պակսիր մը՝  
տաւրական ճշմարիտ մեծութեան հանդէս  
պէտք եղած յարգանքը:**

Արշափ ալ այս վերջին տարիներուս  
աշխարհի պատմութեան մէջ չլուսած կը-  
սիւներ, յաղթութիւններ, յեղափոխու-  
թիւններ, ցաւեր ու զոհեր և դառն յուսա-  
խարութիւններ, այնքան արիւն և այնքան  
վայեր, անզիւթիւններ և անհաւատար-  
մութիւններ, հազարամեայ հաստատու-  
թեանց տապալումներ և արտաքին աշ-  
խարհի երեսոյթին փոփոխութիւնը զրաւած  
ըլլան մը մտածութիւնը՝ ներքին մարդուն  
և մտաւոր զարգացման վերաբերեալ իւրն-  
դիրներէն զմեզ ցրուելով, այսու հանդերձ  
հաճոյցով կը տեսնանք որ բոլոր կիրթ  
և ուսեալ մարդկութիւնը՝ իր մեծարանից  
կ'ընծայէ «Աստուածային կատակերդու-  
րիան» անմահ հեղինակին պանծալի յի-  
շատակին առջև, Ցանդի Ալիկիլրի՝ որ  
թէպէտ վեց հարիւր տարիէ ի վեր մեռած,  
այլ կ'ապրի դեռ և պիտի ապրի իր զը-  
րուածքով, քանի որ գտնուին զաղափառ  
բականը և գեղեցիկը սիրող անձեր:

Ցանդէ մի միայն զրական աշխարհի  
ամենամեծ դիւցազը չէ, որուն զրուածը՝  
յետ Ալուր Գրբի - զուցէ ամենէն շատ  
կարդացուածը և ուսումնասիրուածն ըլ-  
լայ, այլ զարդն է Ուղղափառ Եկեղեցւոյ՝  
որուն մտաւոր և բարոյական ինչպէս նաև  
չնորդիցի ճշմարտութիւնները՝ յաղթանակել

տուին կեանքի փորձառութենէն քաղուած  
սկզբունքով և պատճառարանութեամբ:

Այս պատճառաւ ալ ուղղափառի պար-  
տականութիւնս կատարած կը զզամ, երբ  
Ա. Ստեփանոսի կաճառին տարեկան Հա-  
ւարումին առիթով Ցանդէ հրաշալի զէ՛րը  
կը յիշեցնեմ:

Ցանդէ «Աստուածային կատակերդու-  
րիան» մէջ նկարագրած է ներքին մարդուն  
դիւցազներգութիւնը, իր երեսակայական  
ուղիւրութիւնը գժիխրի և ցաւարանի մէ-  
ջէն մինչև արքայութիւնը՝ կը նշանակէ  
մարդկային հոգույ զարգացումը զգայա-  
րանքի գերութենէն մինչև կատարելութեան  
ազատութիւնը, զգայարանաց խարուսիկ  
պատկերներէն մինչև ճշմարտութեան լու-  
սափայլ արեգական տեսիլը: Այս պատ-  
ճառաւ ալ իր զրութեան մէջ միայն իր  
հոգույն կոիները չներ տեսներ, առան-  
ձնական մարտը անոր՝ որ փրկութիւն և  
ազատութիւն, զուտ ճշմարտութիւնը կը  
փնտուէ, այլ բովանդակ մարդկութեան  
այլարանական հոգենոր զարգացումը:

Բանաստեղծական պատկերներով բա-  
ցարուած իր փորձառութիւնները՝ յա-  
փառենական մարդուն փորձառութիւններն  
են: իր ցերեցուածը անցեալ եղելութեանց  
երզը չէ: կամ արդէն մոռացութեան  
մասնուած հին իզներ, այլ նկարսզիրը  
ներքին կոիներու՝ որ մշտնշննապէս ան-  
դոււ կը վերանորոգուին մարդկային ամէն

1. Ապրէլ 28ին Ս. Առեփանոսի կաճառը իր 66հրորդ  
ճամացուարք տանց: Պատարասիր մէջ զամանու Ըն-  
կերպեան ընդարձակ պրակին մէջ խերսուած էին ութ  
հարիւրէ առելք անձեր, յորք կը նշանաւուին ազուակա-  
նութեան բազմաթիւ ներկայացուցիչներ, շատ երեխու-  
խաններ, Համայսարանի ուսուցչներ, բարձրաստիճան  
եկեղեցականներ և ուղղափառ աշխարհի զասակարզի  
ամենէն նշանաւոր գէմերը, Ներկայ էին նաև Առաջե-

լական Դիեսան Առն. Աքեռփփա, արթեպիսկոպոսներ,  
եպիսկոպոններ և կրօնքի Նախարարը:

Նորին Վահեմաթիւնը Հունգարիոյ Պետակչեան Մի-  
րամաւոր Յովաննէնք Ջենու՝ Սարեհնիս Ալտենիս-  
կոպոս, բարձրան ճառու հոսեցաւ մէծ իւսնդով և զիւնա-  
կածորն անմահ Տանդէ Ալեկեէրի յշխատակը կատա-  
րելով:

սրտի մէջ, կոհւներ՝ որ հուսկ խաղաղութիւն և անդրբութիւն և ստուգիւ երանաւէտ յաղթութիւն կը գտնեն Տանդէէն մեզ նշանակուած ապահով ճամրուն մէջ:

Տանդէ իր դիւցազներգութիւնը գրած է արսորի թափառումներու մէջ, ամէնքէն լրուած ժամանակ, «երբ ինը միայն իր կուսակցութիւնը կը կազմէր», յուսախարութեան զառնութեան ատեն:

Շուտով, իր երիտասարդութեան երազներէն վերջ, ինքինըը հրապարակական կեանքի նուրից: Միանգամայն իմաստասէր, բանաստեղծ, քաղաքագէտ և զինուորական եղաւ: Խմաստափրութիւնը իր մէջ կը կրթէր իր անձին գիտակցութիւնը և ուրիշները զատելու կարողութիւնը: Ան իր զարուն հոգւոյն անակնկալ արկածներուն մէջ խառնուեցաւ: Բանաստեղծութիւնը և ի մասնաւորի իրեն ընկեր քերթողներու օրինակը, որոնք ազատ և անսանձ կեանք մը կ'անցընէին, շուտով ճանչցուցին իրեն՝ բարոյական ապականութեան, անհաւատ ամբարդտութեան և հաճոյքի անյագութեան մեղքերը: Քաղաքանութեան մէջ փորձն առաւ նա անձնական փառափրութիւններու խորտակումն, նկարագրի պակութեան, սրտի կարծրութեան: Շատ անգամներ պատերազմեցաւ ան կոռու դաշտին մէջ իր քաղաքական համոզումներուն համար: Իր ձկոտութերուն չքանալը տեսաւ, տեսաւ իր քաղաքական զաղաքարներուն անհետիլը, ի մասնաւորի երբ Հննիրէկոս կայսեր մահուամբ հոռովմէական կայսրութիւնը լուծուեցաւ: Իր քաղաքական կեանքին մէջ միշտ համաձայն չգտնուեցաւ ուղղափառ Եկեղեցւոյ Ներկայացուցիչներէն ումանց քաղաքականութեան հետ: Գրեթէ գրեթէ փորձութիւնն ունեցաւ ապստամբելու՝ փիլիսոփայի և սքանչելի քերթողի իր բոլոր մեծի մտքով՝ Եկեղեցւոյ հաւատըի և բարոյականի վարդապետութիւններուն դէմ, և այսպէսով վրէժ խնդրել իր քաղաքական անկումին:

Սակայն այդպէս չեղաւ: Իր արդարա-

կորով միտքը զիտցաւ զանազանութիւն դնել ընդ մէջ Եկեղեցւոյ էութեան և մէկ քանի եկեղեցականներու աշխարհիկ քաղաքականութեան: Վերջապէս համակիր եղաւ Եկեղեցւոյ և քաղաքականութեան մէջ ալ իր առաջին մտածութիւնը եղաւ միշտ Եկեղեցւոյ ներգաշնակութիւնը Տէրութեան հետ: Ասելութեամբ լցուած կուսակցութեան մարդը չեղաւ, այլ առարկայական դատաւոր կուսակցութիւններու շափազանցութեանց:

Տանդէ իր ացարանքի տարիներուն մէջ աստեաց նկատմամբ իր ջանքերուն աւերակներուն վրայէն մոցով անցնելով, կը զրադէր մարդուս կեանքին ստոյդ վախճանին և նպատակին վրայ, և խորհրդաւոր տեսիլքի մը մէջ՝ կենդանի կը նկարէր հոգւոյն վերելքը մտաւոր և բարոյական կատարելութեան, որ իր լրում ունի Աստուծոյ հետ միութեան մէջ, և այսու իր քերթուածին մէջ կը քարոզէր այն՝ ինչ որ սորվեցուցած է Եկեղեցւոյ Հիմաղիրը՝ Քրիստոս, և ինչ որ Եկեղեցին ընդունած է իր Հիմաղրէն իրը աւանդ, և ցարդ կը քարոզէ և կը սորվեցնէ:

Մի առ մի յիշատակած է Տանդէ իր բոլոր մոլորանցները, իր կոհւները քաղաքական ազատութեան համար, իր անսանձ փափաքները. և ինչիր հետ յուսահատ կոփի մը մղած է ազատելու համար մոլորութեան և կրքերու կապանքներէն, և այսպէսով ուղղելու հոգին դէպի ճշմարտութիւն և բարոյական ազատութիւն: Համոզուած է, թէ ամէն յաջող կամ անյաջող ելք մեծ կարևորութիւն չունի. զվասաւորն այն է որ մարզկային հոգւոյ ստոյդ յարզը ճանչցովի և անոր ամենէն անթերի զարգացումը և յառաջդիմութիւնը հոգացուի: Կեանքը ճամբար մ'է, ուխտազնացութիւն մը դէպի նպատակ մը: Այսպէսով ճամբան կը տանի զմեզ դէպի անգնահատելի բարիք մը և կատարելութիւն մը, եթէ ջանանց լաւ ճանչնալ նպատակը: Այդ նպատակը ոչ մէկ բան կընայ ըլլալ եթէ ոչ Անհուն թարին՝ Աստուած: Մեր ճամբուն մէջ մեզ առաջնորդ

Է ուղիղ և արդարակորով մարդկային երկրիս վրայ բարոյական օրէնք է՝ որ միտքը, որ կ'առաջնորդէ Ցանդէի Դժոխքի հոգին իր տիրապետութեան ներքեւ առնու և թաւարանի մէջէն. Վիրզիլոս անոր և սանձէ զզայարանքի անսանձ բնազդը, պատկերն է, իսկ աստուածային շնորհը՝ որ իրօց գոյութիւն ունի բարոյ և չարի Տանդէի համեմատ Պէաթրէչէի պատկերի երկուորութիւնը (dualismo), որով հար-



ՏԱՆԴԻ ԱԼԻԿԻՒԹԻ (Ժիորիոյի)

Ներքեւ կը շարժէ միացը և միանգամայն զանի կանգուն կը բռնէ աստուածային ճշմարտութեան ծանօթութեան մէջ, — ինց նինին միայնակ առաջնորդ և ուղեցոյց կ'ըլլայ յարցայութեան։ Շնորհէ լուսաւորուած միտքը կը տեսնէ բնութեան և հոգւոյն մէջ եղած հակասութիւնը։ Այս

կաւոր է որ զմեզ շարին կապէն արձրակնը և ազատենք, Բարոյական աշխարհի մէջ ճշմարիտ չէ միաորութիւնը (մոռնիսո)՝ որ մարդկային ամէն միտուարի կը նկատէ և իբր կեանքի աղբիւր, կեանքի օգուտը բարոյական բարւոյն շաղկապուած է։ Բարոյական շարիքը կեանքի

արժանապատռութիւնը կը խոնարհեցնէ և կը նուաստացնէ, կը կապէ զայն և իր ետքն կը բարչէ զջումը և պատիքը:

Ծնդհակառակն բարյական բարիքը բը-նութիւնը կ'ազնուացնէ և աւելի կը վսե-մացնէ. աստիճանաբար կեանցը կը զար-գացնէ, կ'ամրապնդէ, կ'ոգնորէ, կը կատարելազործէ և աստուածային պար-գևներով կը ճոխացնէ: Եեանցի յառաջ-դիմութիւնը ըմբռնելու կարենոր պայմանն է ճանշնալ բարոյն և չարին մէջ եղած զանազանութիւնը, և ներգործութիւնը մէկ բանի ուժերով՝ որոնց յաղթել կու տան բարոյն և չարին վրայ: Այս ճշմարտու-թիւն լիուլի հասկացութիւնն համար բա-ւական չէ լոկ զիտութիւնը ոչ ալ իրաւոնքը կամ մարդկային օրէնք, այլ հարէ է դնել ուրիշ կենսական ճշմարտութիւններ՝ զորս այլազգ չենք կրնար սորվիլ, եթէ ոչ հաւատրով: Եւ հաւատրով ձեռք բերուած այդ ծանօթութիւնները ճշմարիտ են, որով-հետեւ ծագումն ունին անսահմանապէս ճշմարիտ և սուրբ Աստուծոյն, և որով-հետեւ փորձառութիւնը ցոյց կու տայ որ իրօր կրնան զմարդ հոգեղին, ազատ և սուրբ ընել, մինչև իսկ հասցնելով զինքը՝ յետ շատ մը կոփներու՝ արքայութեան փառք:

Տանդէ կ'ընդգունի հաւատրը և Քրիս-տուէ աւետարանուած բոլոր ճշմարտու-թիւնները հոգեոյ արժէքին, Աստուծոյ, անսահման բարոյ, սիրոյ, և մարդուս վերջին վախճանի մասին: Եթէ ճանշնայ բարին ու չարը ինքն իր մէջ և մարդուս մէջ առնասարակ: Ոչ ոք այնքան լաւ նկարազրած է զմարդ խնարինեցնող ու-ժերը, որոնց ազդեցութիւնը կարելի է քմոխիք մէջ տեսնել: Այսպէս նաև մարդ-կային հոգին մարդող ուժերը, ինչպէս որ նկարազրուած է վաւարանին մէջ. և հուսկ շնորհիք միջոցաւ կատարուած հոգ-ոյն փրկուրինը և ազատուրինը Արքա-յութեան մէջ:

Մտքի և շնորհիք օգնութեամբ զիտցաւ Տանդէ վարդապետորէն նկարազրել մար-դուս մէծ ճամբան այնպէս՝ ինչպէս որ կը

փափացի քրիստոնէական վարդապետու-թիւնը, և ինչպէս որ փորձառութիւնը յայտնութեան հետ համաձայն կ'ապա-ցուցնէ շարունակ: Տանդէ նկարազրած ատեն մաքրութիւլը, զարգացումը ճշմարիտ ազատութեան և յառաջդիմութեան ճամ-րուն մէջ՝ միշտ կ'անձնատրէ՝ Քրիստոսէ քարոզուած ճշմարտութեան համեմատ: արքայութիւն Աստուծոյ ի եերք ի ձեզ է, ձեր մէջ, ձեր հոգւոյն մէջ: Երբ բանա-ստեղծը ացսորի մէջ կը գտնուէր և նուաս-տացուցիչ պայմաններու տակ հայրենիք կը կանչուէր, կը պատասխանէր թէ հայ-րենիքը իրեն աւելի պէտք ունի, ցան թէ ինքը հայրենիքին, որպէսէ իրեն համար բաւական է ո՞ր և է տեղ մը՝ ուր փայլին Աստուծոյ՝ արքակը և աստղեր՝ աւետող յափտենական ճշմարտութիւնները՝ զորս փնտուելու համար ալ ևս նուփրած էր իր կեանքը:

Բնութիւնը չի յաղթուիր զոռոզու-թեամբ և անտարբերութեամբ, այլ սիրով: Աստուծու սէր է: Իսկ սէրը հիմն է տէ-րութեան, ընկերութեան և ընտանիքին: Առանց անոր անօգուտ են մարդկային բոլոր ջանցերը, մարդոց բոլոր օրէնքները և սահմանապրութիւնը:

Տանդէ ընթերցումը մեզի համար միայն արուեստի հաճոյը մը չէ, այլ պատճառ և առիթ վերացանալու մեզ մեր վրայ՝ խրկալու համար մտածութիւններ և ճշշ-մարտութիւններ և ամենախորին ու փըր-կաւէտ բաներ: Տանդէ, ինչպէս կ'ըսէ Ոզանամ, դի՛ դարու ուղղափառ իմաս-տափրութիւնն է, կամ ինչպէս այլը կ'արտայայտուին՝ Աստուծային կատա-կերգութիւնը Փփ դարու աստուածարանու-թեան և իմաստափրութեան քերթողական Համառութիւնն (Summa) է: Արդիինը մ'է այդ զարուն, յորում քրիստոնէական մտածութիւնը կը տիրապետէր, և ամէն ինչ ամրողլութիւնը մ'էր միացեալ հոգի-ներու մէկ հաւատը: մէջ՝ որ առ Աստուծու կը բարձրանար ինչպէս զոթական ոճը՝ ծնունդ այդ ժամանակի՝ կը ջանար յաղ-թել նիւթի ծանրութեան, և նիւթն ինցնին

հպարտորէն բարձր կը կանգնէր: Մեծ չէ, կենսաբուխ ճշմարտութիւն մը դարձած չէ անոնց մէջ:

Իմաստափրութիւնը և արուեստը, միտքը և հանճարը կը սպասարորէն այն ատեն, ինչպէս Ս. Թովմաս Ագուինացի և Տանդէ:

Իմաստափրութիւնը և արուեստը, միտքը և հանճարը կը սպասարորէն այն ատեն մարզու յափտենական ճակատագիրներուն Յայտնութիւնը և մարզկային բնութիւնը կատարեալ ներդաշնակութեան մէջ կը գտնուէին: Երբ բնութիւնը ուղեց դիմացքել յափտենական ճշմարտութեանց, ինչպէս կը նկարազգը Տանդէ, այն ատեն վար ինկանք, արքայութենէն բաւարան, բաւարանէն ալ դժոխք:

Այժմեան դարը Տանդէական դժոխքի տանջանցներուն համը առաւ: Բայց, փառք Աստուծոյ, զգաստութեան ժամանակը հասած է, և հիմակ մոլորութեանց իրորը իյնանիս վերջ, փնտուենց վերականգնումի ճամրան: Տեսանք որ, բարոյական աշխարհի կարզը աւերիչ ուժերով չի կրնար ծնանիր, այլ ընդհակառակն պէտք ենք յաղթել անխնայ կերպով այդ ուժերուն, եթէ Կ'ուղենք կեանքի ազատութիւն վայլեւ: Ճիշտ այս ժամանակներու կրնանք յարմարցնել տանդէական մտածութիւնը: Այս պատճառու այսօրուան Հունաբրիոյ որդիները կրնան և պէտք են ուսութասիրել յատուկ և փրկաւէո պաղով մեծ քանաստեղծին գործը:

Պէտք ենք սորվիլ իրմէ, որ կարուո՞ք է կրթել մեր մէջ անկենակելի նկարագիր մը, զոր ձեռք բերելու համար պէտք ենք ընդունիլ՝ տառանց բացառութեան՝ քրիստոնէութեան բարձր ճշմարտութիւնները Վերջին ժամանակներու մէջ ստիպւեցանք ստիպ հանդիսանես ըլլալ սոսկալի և անսպասելի նուազութիւններու: Զօրաւոր և նկարազը տէր կարծուած անձինք ինկան: Շատեր, որ Ծաղկազարդին ովասնան կ'երգէին Քրիստով, Աւագ Աւրամթուն ընտարեցին և մեծարեցին թարարքան, և մահուան դատապարտեցին Քրիստոսը: Կան մարդիկ որ բնաւ ըրած չեն հոգւոյ մաքրութեան ճամքան՝ Տանդէի նման: Քրիստոնէութիւնը այնպիսին բարքարքին մէջ իւրացած

չէ, կենսաբուխ ճշմարտութիւն մը դարձած չէ անոնց մէջ:

Տանդէ ամենէն սաստիկ կոհւնիրու մէջ ալ իր հաւատարը անաղարտ պահեց, և իր հաւատարմութիւնը առ Եկեղեցին և Քահանայապետն միշտ աւելի գորաւոր և անընկելի եղաւ:

Կան ուղղափառներ, որ քաղաքական փոքր անհամաձայնութեան մը պատճառաւ, կամ Եկեղեցւոյ նուիրապետութենէն ընդունած սոոյզ կամ կարծեցեալ անիրաւութեան մը համար՝ անմիջապէս Կ'ուրանան ամենէն նուիրական ճշմարտութիւնները և կը նահանջնեն, և կարող են բոլորովին մերկանալ բարի և ներքին ամէն զգացում: այս տեսակ ուղղափառներ արժէց չունեցող հոգիներ են, զորք ամենին Քրիստոսի հոգին: Այս տեսակ ուղղափառներ և ոչ իսկ իրենց անձնական համոզութեար և սկզբունքները Կ'ուրանան, որովհետեւ իրօց երթե ունեցած չեն: Իրենց իրենց մէջ հոգինան ուժ մը չունին, որ հոգերը կոռու մէջ կը յաղթէ և կը նուածէ:

Ներկայ դարու գաւակը կրնայ Տանդէի քերթուածէն սորվիլ՝ մտաւոր և հոգմոր բարձրութիւնը ուղղափառ դարու մը իր ամէն իմաստով, ուղղափառ՝ հոծ և կուռ: Այն գաղափառները որ Տանդէի մէջ կը կարդանց, քրիստոնէական մարդկութեան հասարակաց զանցը կը կազմն: Ամէն էջի մէջ հոգին..., հոգւոյ գերազանցութիւնը, յափտենական և աստուածային ճշմարտութիւնները, բարոյական շրէնքները կը տիրապետեն: Այսպէսով մարդիկ գիրար կը հասկնան: հաւատարի և բարոյականի այս միութեան շնորհի իրենց ներքին վիճակը, ներքին կարզը և զգացումը ամենուն մէջ հաւասար է: Մի և նոյն հաւատարը, յոյսը և սէրը իրենց կեանք և արիութիւն կը պարզէ: Այս միութեան մէջ զօրեղ ուժ մը պարունակուած է:

Այսօր աւելի փափաքելի բան չկայ: Եթէ ոչ մտածութեան և սկզբունքի միութիւնը, միութիւն՝ որ ուժ Կ'արտադրէ: Մտածութեան միութիւնը մի միայն հա-

ատարի և քրիստոնէութեան մէջ է։ Տարակոյսը՝ անջատող և մահարեր ուժ մ'է, ինչպէս կը կարդանք Տանդէր մէջ։

Թերահաւատոց և նենգալուրց զիրար կը բազմեն։ Եթէ հունգարական ազգէն կ'ուզենք նորաստեղծել միացեալ և կորովի բանակ մը, պէտք ենք հաւաքել այդ բանակը քրիստոնէութեան հասարակաց սկզբունքներու միջոցաւ, որոնց յօդից ուժը ծանօթ։ Է մեզ կեանքի և պատմութեան փորձառութենէն։

Տանդէր յիշատակին տօնախմբութիւնները կը կայանան, մեր կողմանէ տնկեռու և բեղմաւորելու մէջ իր հոգին մեր սրտին խորը։ Ընտրեալ այդ հոգիները՝ որ գիտեն հասկնալ և թափանցել ամենէն մեծ բանաստեղծին հոգին մէջ, նախ իրենք

կ'իւրացնեն զայն, և յետոյ՝ իրենց օրինակով և յորդորմամբ կը հաղորդին հունգարացի ժողովրդեան։ Պատշաճ և արժան է որ մերայինց սորվին սրանչանալ Տանդէրի հոգւոյն վրայ և նմանիլ իր նկարագրին։ Բանաստեղծին վստահութիւնը և լիուլի ապակինութիւնը Աստուծոյ վրայ՝ ամենէն աւելի ծանր յուզումներու, կոփւներու և վշտերու ատեն, մեզի թող օրինակ ըլլայ մեր գողգոթայի օրերուն մէջ, և եթէ հաւատարմօրէն օրինակին նմանինք, մեծացայլ պիտի շտապեցնենց յարութիւնը մեր ճշմարտութեան՝ այժմ գամուած խաչին վրայ։

Թարգմ. Հ. ԳԵՐՈՎԻՔ ԶՐԱՔԵԱՆ

Osservatore Romano 22 Մայիս 1921

## ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

«Ա.ՍՈՒԽ.ՇԱ.ՑԻՆ» ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ» ՄԷՋ

Տևնո՞ի այս անզուգական Քերթուածը, պէտք է ըսենք անմիջապէս, իր բանաստեղծական ու մեծախորհուրդ իմաստներու անօր թևերուն վրայ՝ կը կրէ ամենէն աւելի բնութեան ու գիտութեանց մէջ գտնուող էն հրատարի տարերը։ Աստուածաբանք անոր ծոցին մէջ նկարուած կը գտնեն, մարդկային կարողութեան շափակ, էն ստուգադյնն ու իրականը, բացարձակն ու երանականը, որ հաստատուած է կրօնքի անխախան հմարտութեանց վրայ։ Պատմաբանք՝ Քերթողէն յիշատակուած անձնաւորութեանց ու գէպքերու գրաւած փայրն ու դիրքերը կ'ուստիմնափառն։ Բնախօսք անշուշտ կը հետաքրքրութիւն Տանդէր բացած լրջապատճերովն ու պարունակներով, և կը դիտեն բնութեան տարերաց առած կերը և այլ զանազան ստորերկերայ մասերն և ուղիները։ Քերթողք անոր մէջ կը դիտեն այն բանաստեֆութիւնն ու վառ երեակայութիւնը՝ որ իր կատարելութեան գագաթնակէտն հասած է։

Այս, ասոնք ամէնը միանցի, բայց առանց զիրար խափանելու, կը գտնուին Ալիկիւրի

Գլուխ – Գործոցին մէջ։ Աակայն այդ հրաշակերտը բազմաստեան գիտութեանց բով մ'ըլլալէն զատ՝ յատկապէս կը ներկայացնէ իր մէջ՝ զեղարուեստական ճիւղի մը հրաշակիբներն ալ, Դիւթիչ տարր մ'ունի ան իր մէջ, ձայնը, և անոր բազմերսիեան զարգացումը՝ երաժշտութիւնը։

Բայց գեռ մանրամասնութեանց չիջած, հետեւելով նաև խոսր. երաժշտակէս Ալնալտօ Պոնավինութրայի՝ և գողզ. երաժշտական քննադատ Գամիլ Փելէկի<sup>2</sup>, կ'ուզենք ցուցնել նախ, թէ

ԿԸ ՍԻՐԷՐ ՏԱԿԵ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Այս մասին զանազան մատենագիրներ արտայայտուած են։ Պոքքաչիօ «Տանդէր վարք» ին մէջ կը հաստատ զայդ։ Է չոնարժուած Պունի և ծիւնոնցց Մանէդդի կ'ըսեն,

1. «Dante e la Musica». Լիվոնիո 1904.

2. Revue des Deux Mondes. 1903. էջ 67-86.